

ԿԱՄԱՎՈՐ ՄԱՅ. ԾԱՊՈՆԱՅԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՍԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

Բ. Ժ. ԳԻՇՅԱՆ

Ծապոնական միջնադարի հետ առնչվող կամավոր մահվան ավանդույթը բուդդայական Արևելքի ուսումնասիրությունների հավերժական թեմաներից է: Հետաքրքրությունը նրա հանդեպ չի թուլանում ժամանակի, Արևելյան Ասիայում ու բուդդայական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների հետ: Դրա պատճառը այդ իմաստիտուտի ազդեցությունն է Ծապոնիայի էթնոսոցիալական ու հոգևոր զարգացումների վրա: Եթե ուզում ենք հասկանալ Ծապոնիան, ապա պարտադիր է միջնադարում լայն տարածում ստացած սույն ավանդույթի իմացությունը:

Անտիկ հեղինակ Պլուտարքոսը նկարագրում է հռոմեական սենատական արիստոկրատիայի ներկայացուցիչ Կատոնի՝ ինքնասպանությունը: Նրա տղան, մերձավորները և սպասավորները ցանկանում են նրան հետ պահել իր որոշումից, ինչը տարօրինակ է թվում կամավոր մահվան ավանդույթը կրողներին¹: Տոկիոյի ֆրանս-ճապոնական իմաստիտուտի նախկին տնօրեն Մ. Փինգուետը, հակառակ Արևմուտքին բնորոշ այս վարքականոցի, կամավոր մահվան որոշում ընդունած ճապոնացի ռազմիկի մասին գրում է. «Նրանք, ովքեր մոտիկ են նրան, իրենց նվիրվածությունն արտահայտում են միայն լռությամբ ու հարգանքով... Չկա սիրելիներից թաքցնելու տխուր իրողությունը, շրջապատողների հետ մինչև վերջին պահ պայքարելու և որոշումը հիմնավորելու անհրաժեշտությունը»²:

Ծապոնիայում սկզբունքորեն երբեք էլ չի եղել որևէ առարկություն մահվան ազատ ընտրության հանդեպ, մի հարց, որի հետ քրիստոնյա Արևմուտքը դժվարացել է համաձայնել: Կամավոր մահն Արևմուտքում դիտվել է որպես բանականության ուժի դրսևորում: Դա ներառում է այն դեպքերը, երբ դեմ առ դեմ ես ելնում առողջության կորստին ու անհույս հիվանդությանը: Բայց այդ իրավունքը մերժվեց: Արգելքը տարածվեց նույնիսկ հիվանդների վրա, որոնք ցանկանում էին ազատվել տևական ու տանջալի ցավերից: Արևմուտքն ընդունեց բացարձակ Տիրոջը՝ մեկ աստծուն, որին ընդունելուց հետո մեռնելու ազատության խոստումը դրժվեց: Մահվան ընտրությունը նշանակում էր ապստամբություն Տիրոջ դեմ, և անհատն Աստծուն թողեց իր մահվան ժամը որոշելը: Իսկ հռոմեական Դիոկղետիանոս՝ կայսեր անունից հայտարարվեց, որ ինքնասպանությունը քրիստոնեության երդվյալ թշնամին է³:

Ինքնասպանության հանրային պարսպումն ուժեղ էր սկսած քրիստոնեական առաջին դարերից և ուներ երկար նախապատմություն անտիկ մտքի մեջ: Սպանել ինքն իրեն նշանակում էր վատություն անել այն համայնքին, որին պատկանում ես: Սպանելով իրեն՝ անհատն անարդարացի էր համարում պետությունը, և դեռևս անտիկ օրենքում նախատեսված էր պատիժ. նրա աջ ձեռքը կտրում և թաղում էին առանձին⁴:

Հակառակ քրիստոնյա Արևմուտքի՝ ճապոնական հասարակության մեջ կամավոր մահն ավանդույթ էր և վիթխարի էթնոմշակութային նախապատմություն ուներ: Այն, հին

¹ Կատոն կրտսեր (մ.թ.ա. 95-46): Ինքնասպանություն է գործել՝ ի նշան բողոքի Հ. Կեսարի կողմից քաղաքացիական ազատությունների սահմանափակման և իշխանության կենտրոնացման:

² Կատոնի ինքնասպանության նկարագրությունը տե՛ս North's Plutarch, ed. G. Wyndham, vol. V, London, 1896, էջ 177-178:

³ M. Pinguet. Voluntary Death in Japan. Cambridge: Polity Press, 1993, p. 2.

⁴ Դիոկղետիանոս (243-316):

⁵ Մանրամասն տե՛ս M. Pinguet, նշվ. աշխ., էջ 8:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 9:

ժամանակներից սկսած, տարածված էր երկրի այն շրջաններում, որտեղ կլիման հատկապես դաժան էր, և որտեղ տարածված էր չքավորությունը: Խնդրին առնչվող արևմտյան գրականության մեջ կամավոր մահը կապվում է «գոհողության մոտիվ» և «ինքնազրկում» հասկացությունների հետ⁷: Ծապոնական էթնոսոցիալական համակարգում այս սովորույթն ինստիտուցիոնալացվեց, դարձավ մշակույթի որոշիչ տարր, իսկ զինվորական դասի վարքականոնը սահմանում է դրա հետ կապված ամբողջ արարողակարգը⁸:

Կամավոր մահը լայն տարածում է ունեցել Կամակուրայի դարաշրջանում⁹, բայց ավանդույթի ներկայությունը զգացվում է ճապոնական նախապատմության խումբացած էջերում: Անցյալում, սկսած այն ժամանակից, երբ տարածված էր կայսեր կամ տիրոջ մահից հետո նրա հետ նաև իր հպատակների թաղումը, մարդիկ իրենց սյուզերենին ուղեկցում էին դեպի մահ: Ծապոնական վաղ տարեգրությունը՝ «Նիհոնգին», հիշատակում է կայսր Սուինինի երիտասարդ եղբոր հետ թաղված կենդանի մարդկանց մասին: Համաձայն «Նիհոնգիի» կիսաառասպելական տարեգրության՝ Սուինին Տենոն՝ Ծապոնիայի 11-րդ կայսրը, ազդվելով իր եղբոր թաղման ժամանակ իրականացվող կենդանի թաղումներից, որոշեց վերջ դնել թաղման ծեսերի մաս կազմող գոհաբերություններից¹⁰, բայց զոհաբերությունները շարունակվում էին կամավորության սկզբունքով: Տիրոջ և ծառայի, ինքնակալի և վասալի, կայսեր և պաշտոնյաների միջև ուղղահայաց կապվածության զգացմունքներն այնքան ուժեղ էին, որ առաջինների հեռանալուց հետո ապրելը թվում էր անիմաստ: Գոյություն ուներ միայն մեկ կյանք, և այն ծառայում էր միայն մեկ տիրոջ: Հեռավոր դարերի արձագանք է նվիրում խորը զգացումների արտահայտություն էր նման կամավոր մահվան, արդի ժամանակներում, դրսևորումը 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի հերոս զեներալ Նոգիի ինքնազոհողությամբ: 1912 թ. սեպտեմբերյան մի երեկո՝ կայսր Մեյձիի (1868-1912) թաղման օրը, երբ հրանոթի համազարկերն ազդարարեցին սզո թափոռի ելքը պալատից, Նոգին կնոջ հետ միասին կամավոր հեռացավ կյանքից՝ տիրոջն ուղեկցելով դեպի մահ:

Ծապոնական նախապատմության մեծագույն կայսրերից մեկը՝ Նիստուկու Տենոն¹¹, երեք տարի շարունակ համեստության մրցության մեջ էր իր եղբոր հետ: Նրանցից յուրաքանչյուրն իրեն համարում էր պակաս արժանավոր երկիրը կառավարելու համար, և թագը մնացել էր անտեր: Մի անգամ նույնիսկ ունեւ ձկնորսի, որ ցանկանում էր կայսրին մի կողով ձուկ նվիրել, այնքան մեկը մյուսի մոտ ուղարկեցին, որ ձուկը նեխեց: Երկու

⁷ Տե՛ս «Death and Ethnicity: A Psychocultural Study». NY: Baywood Publishing Company, Inc., 1981:

⁸ Սույն նյութի հանդեպ հետաքրքրությունը միշտ էլ մեծ է եղել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Ռ. Բենեդիկտը կատարեց ճապոնական մշակույթի տիպի ուսումնասիրություն և գրեց «Քրիզանթեմը և սուրը: Ծապոնական մշակույթի մոդելներ» աշխատությունը: Բացատրելով ճապոնացիների հավատարմությունն ամրագրված սոցիալական դերերին և նրանց խորը մտահոգվածությունն իրենց պարտքի ու պարտականությունների կատարման խնդրով՝ Ռ. Բենեդիկտը հանգում է այն հետևության, որ, ի տարբերություն ամերիկացիների, որոնք իրենց բարոյականությունն ու վարքը պատճառաբանում են մեղքի զգացումով, ճապոնացիներն առաջնորդվում են ամոթի զգացումով: «Մեր բարոյականության հիմնարար համակարգում, գրում է Ռ. Բենեդիկտը, մեք չենք ներառում ամոթին ուղեկցող սուր անձնական դժվարությունները: Ծապոնացիներն այդպես են վարվում: Ծապոնական էթիկայի մեջ ամոթն ունի այնպիսի իշխանություն, ինչպես «խղճի մաքրությունը», «Աստծո հետ լինելը» և «մեղքերի թողությունը» արևմտյան էթիկայի մեջ» (տե՛ս R. Benedict. The Chrysanthemum and the Sword: Patterns of Japanese Culture. Boston, Cambridge, 1946, էջ 224):

⁹ Կամակուրայի դարաշրջանն ընդգրկում է Կամակուրան (ժամանակակից Տոկիոյից ոչ հեռու) նստավայր ընտրած ինը սյուզոնների, զինվորական գլխավոր հրամանատարների կառավարման ժամանակաշրջանը (1192-1333):

¹⁰ Այս մասին տե՛ս «Nihongi: Chronicles of Japan from the Earliest Times to A.D. 697». Tut Books, 1972, էջ VI:

¹¹ Նիստուկու Տենոն՝ Ծապոնիայի տասնվեցերորդ կայսրը, ըստ «Նիհոնգիի» ավանդական տարեգրության, կառավարել է 5-րդ դարի առաջին կեսին: Օսակայի մոտ գտնվող նրա դամբարանը զբաղեցնում է վիթխարի հողատարածք և իր տեսակի մեջ Ծապոնիայի ամենամեծ կառույցն է:

եղբայրներից փոքրը տեսնում է այս իրավիճակը և ասում. «Ես հասկանում եմ, որ ոչ ոք չի կարող հաղթահարել իմ ավագ եղբոր կամքը: Նման պարագայում պե՞տք է արդյոք ես վնաս պատճառեմ կայսրությանը՝ երկարաձգելով իմ կյանքը»: Դրանից հետո նա սպանում է իրեն¹²:

Համեստության այս գլուխխոնարհումները մկատելի են նաև ժամանակակից ճապոնական կյանքում: Համեստության և փոխզիջումի այս մրցությունը ճապոնացի անհատին շփոթեցնում է և առաջ բերում դժվարություններ: Այսպիսի իրավիճակներում ինքնասպանությունը կամավոր մահվան ավելի քիչ հատկանիշներ է պարունակում: Հաճախ զոհը հայտնվում է ամհանդորժելի իրավիճակում և ստիպված է լինում վերջ տալ իր կյանքին:

Ճապոնիայի լեգենդար հերոսներից մեկը՝ «Կոժիկի» և «Նիհոնգի» վաղ աղբյուրների առասպելական հերոս, մեծ ճանապարհորդ, ռազմիկ և հրեշներին սպանող Յամատո Տակերում, մի անգամ որոշում է կտրել այն կարճ տարածքը, որը Տոկիոյի ծովախորշը կապում է օվկիանոսի հետ: Այս ծովը, ասում է նա, այնքան փոքր է, որ կարող ես մի ափից մյուսը ցատկել: Ծովի աստվածը զայրանում ու փոթորիկ է բարձրացնում: Յամատո Տակերուի նավը կործանման եզրին էր: Արքայազնին ուղեկցողների մեջ կար մի կին, որի անունն էր լեդի Օտոուաչիբանա: Նա նշանավոր Հոգամի կյանից էր: Լեդին արքայազնին դիմում է հետևյալ խոսքերով. «Քամին ուժեղանում է, ալիքները հզորանում, քո նավը խորտակվում է: Այս ամենը ծովի աստծո արածն է: Թույլ տուր քո անարժան ծառային մտնել ծով, որպես քավություն, քո ազնվական գոյության համար»: Հազիվ ավարտելով խոսքը, նա նետվում է ալիքների մեջ: Վայրկենաբար ալիքները հանդարտվում են, և նավը կարողանում է ափ հասնել¹³:

Ճապոնական պատմության այգաբացից ի վեր այս թեման (ինքնագոհաբերությունը կամ ինքնամերժումը) շարունակաբար գոյություն է ունեցել: Այս ավանդույթի գոյության ամբողջ ընթացքում ինքնագոհաբերման գործողությունները և ինքնամերժումը մեծարվել են որպես բարձրագույն արժեքներ: Բազմաթիվ են այն լեգենդները, որոնք պատմում են ջրհեղեղները կամ տարերքները կանգնեցնելու համար աղջիկների զոհաբերության մասին: Քավության սովորույթը պահանջում է մեկ կամ մի քանի զոհերի կենդանի թաղում կամ մուրջների կամ ամրոցների պատերի մեջ՝ որպես զոհողություն տեղի աստվածներին՝ կենսական ուժեր ստանալու համար: Էդոյի (միջնադարյան Տոկիոյի) ամրոցի հաստ պատերի տակ գտնվել են կմախքներ: Ամրոցը կառուցվել է 17-րդ դարում Տոկուգավա՝ տոհմի պոգոնների կողմից և մինչև Մեյձի դարաշրջանը (1868-1912) եղել է կայսերական պալատ:

Պատերի մեջ թաղումը պետք է լիներ կամավոր, թաղվողը պետք է լիներ ինքն իրեն զոհաբերող և ինքնական մահվան անդունդը նետվող: Չոհաբերությունը ներանձնացվում էր, մաքրվում ու հանդես գալիս որպես կամավոր մահ: Չոհը, ինքնական մեռնելով, առաջացնում էր ոչ միայն ցավ, այլ նաև հարգանք ու հիացում:

Ճապոնական միջնադարում՝ պատերազմական ահավոր ավերածության դարաշրջանում, կամավոր մահն ինստիտուցիոնալացվեց զինվորական դասի կողմից: Տղամարդկանց միջև կապը, որ կոփվել էր տևական պատերազմներում (հիշենք, որ ճապոնական հասարակությունը բնորոշվում է որպես պատերազմի հանդես պայթյուցիական հակում ունեցող հասարակություն), հաճախ ավելի ամուր էր, քան ամուսնական կապը: Միջնադարում ճապոնացիները սանկցիալորեցին մեռածին ուղեկցող ինքնագոհողությունը ռազմիկների միջև, բայց երբեք չէին մտածում, որ կինը պետք է միանա իր ամուսնունձ նրա մահից հետո, ինչպես հնդկական սաթի սովորույթն է սահմանում¹⁴:

¹² Այս մասին տե՛ս «Nihongi...», էջ XI:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ VII:

¹⁴ Ազնվական զինվորականության Տոկուգավաների տոհմը Ճապոնիան կառավարել է 17-րդ դ. սկզբից մինչև 1868 թվականը:

¹⁵ Հնդկական թերակղզու միջին և հյուսիսային մասերում տարածված սաթի սովորույթի մասին տես Franklin Edgerton (ed. and trans.). Vikrama's Adventures. Harvard University Press, 1926, vol. 1, էջ 228-230: Սաթի սովորույթի մասին գրառումներ է թողել արևմտյան ներթափանցման շրջանում Հնդկաստան այցելած պորտուգալացի Դուարտե Բարբոզան (տե՛ս «The Book of Duarte Barbosa ». Nedeln, Liechtenstein: The Haklvy Society, fl. II, 1967, էջ 19):

12-17-րդ դարերում ճապոնացիները ոչնչացնում էին միսյանց՝ իրար դեմ մարտնչող նախարարական երկու տների ու նրանց ժառանգորդների առաջնորդությամբ: Այս բաժանումն ընդգրկում էր ավանդական ճապոնական հասարակության բոլոր շերտերը: Բուդդայական տաճարները ստեղծել էին սեփական բանակները: Ջինվորական դասի պատասխանն արյունոտ և համընդհանուր պատերազմական ավերածությունների, որոշակի վարքականոնի ու ասկետական բարոյականության ստեղծումն էր: Ինքն իրեն ոչնչացնելու գործողությունը դառնում էր ավելի ու ավելի վսեմ, ճշգրիտ և ծիսայնացված: Այս արարողակարգն ընդհանրացվեց սեպուկու ամուսնով, որը չինական երկու պիկտոգրամների («որովայնի խոտոչ» և «կտրել») չինարեն ընթերցումն է, իսկ նրա ճապոներեն, գոեհիկ (աղավաղված) արտասանությունը (հարակիրի, *harakiri*) մեզ ավելի է հայտնի:

Սկսած 6-րդ դարից՝ բուդդիզմը ներթափանցել է Ճապոնիա և վիթխարի բարեկրթող ազդեցություն թողել բարքերի վրա: Բուդդիզմի ազդեցությամբ էր, որ միջնադարում մեղմվեց կամավոր ինքնաոչնչացումների ալիքը: Բուդդիզմը կոչ էր անում կյանքը նվիրաբերել նիրվանային (նյութական կապվածություններից ձերբազատմանը) և ոչ թե զոհել այն: Բուդդիզմի ազդեցությամբ կամավոր մահը դարձավ պակաս կտրուկ ու վճռական: 1219 թ., երբ մեռավ սյոգուն և բանաստեղծ Մինամոտո Սանետամոն, նրա վասալներից մոտ հարյուրը, համաձայն ֆեոդալական հավատարմության հնագույն ավանդույթի, այլևս կարիք չունեին դիմելու կամավոր մահվան: Նրանք սափրեցին իրենց գլուխները, աշխարհաթող եղան և մեկուսացան բուդդայական վանքերում: Բուդդիզմի մուտքով էթնոսոցիալական ավանդույթին բնորոշ ինքնամերժումը և ինքնազրկումը դրսևորվեցին նորովի:

Ճապոնիայի արդի պատմության մեջ կամավոր մահն իր համապարփակ դրսևորումն է ունեցել 1930-1940-ական թվականների խաղաղօվկիանոսյան ռազմերթի ընթացքում: Ծավալվող հակամարտությունը և ծանրագույն պարտությունը խորացրեցին էթնոմշակութային ինքնության տանջալից որոնումները:

1944 թ., երբ ամերիկացիներն ասի իջան Սայպանում, մի խումբ օդաչուներ որոշեցին օդանավերով հարվածել թշնամական նավերին: Օրթոդոքս մեթոդներն արդեն անբավարար էին: 1944 թ. հոկտեմբերի 20-ին ռազմաօդային ուժերը կազմավորեցին ինքնասպան օդաչուների (կամիկաձե) առաջին «հատուկ գնդերը»: Նրանք այլևս չէին հավատում, որ կարող են հաղթել պատերազմում, բայց, հանուն Մեծ Ճապոնիայի փառքի, հոգեվարքը պետք է ուղեկցվեր կամավոր մահով: Եկավ նաև այն օրը, երբ ինքնազոհողությունները գործնականորեն արդեն ավելորդ էին, բայց կամավոր մահը հաղթարշավում էր առանց նպատակի: «Հատուկ գնդերի» հիմնադիր գեներալ Օգիսին¹⁶ ասում էր, որ ինչ էլ որ լինի, կամավոր մահը ճապոնական հոգևոր ժառանգության պահպանման երաշխիքն է:

20-րդ դարի երկրորդ կեսին կամավոր մահվան ավանդույթի նշանավոր պաշտպանն ու վերակենդանացնողը ականավոր գրող Միսիմա Յուկիոն էր (1925-1970): Նրա կամավոր մահը դարձավ փառավոր անցյալի համար սպիրիտուալ պայքարի խորհրդանիշ:

Արդի քաղաքակրթության մեջ, որը Ճապոնիայում հաղթանակեց պատերազմում նրա կրած պարտությունից հետո, Միսիման տեսնում էր մոայլ դեկադանս, որը դյուրացնում էր էգոիզմի ու թաքնված չարակամության տիրապետումը: Աշխարհն այլևս չէր ճանաչում ավելի բարձր արժեք, քան անհատական հաջողությունը, բայց, Միսիմայի կարծիքով, ավելի վսեմ նպատակների չգոյության դեպքում կյանքն իմաստազուրկ էր: Նա, հանուն անցյալի երազների, մերժում էր ներկա աշխարհը: Փառավոր անցյալի և պարտքի սկզբունքի իր կարոտաբաղձության մեջ նա ռոմանտիկ էր:

1970 թ. նոյեմբերի 25-ին Միսիման այցելեց Տոկիոյի կենտրոնի իչիգայայի ռազմական բազայում գտնվող արևելյան բանակների հրամանատար գեներալ Մասիտային: Տասը ռուպե հետո Մասիտան պատանդ էր վերցված՝ դանակը կոկորդին: Համաձայն հին ավանդույթի, որը մերժում էր Արևմտաքի հնարանը՝ հրազենը, Միսիման պատվի խնդիր էր համարում կիրառել միայն սառը պողպատ: Հետո նա ներկայացրեց իր պահանջը. պատանդի կյանքը կխնայվի, եթե զինվորականներն ունկնդրեն իրեն: Իր խոսքում նա անդրադարձավ ազգային ոգուն, զինվորական իդեալին և արդի աշխարհի դեկադանսին: Ավարտին, ինչպես հին օրերի մի սամուրայ, նա իրականացրեց սեպուկու:

¹⁶ Օգիսի Տակիձիրո (1891-1945):

Միսիման գոհեց իրեն՝ բաղձալով ցույց տալ, որ ելք գոյություն ունի: Իսկ ելքն ինքնամերժումն ու ինքնազրկման վսեմ գաղափարների հակադրումն էր էգոիզմին ու եսակենտրոնությանը: Միսիմայի կամավոր մահը սպիրիտուալ պայքարի խորհրդանիշ էր՝ հաճուն ավանդական ճապոնական ոգու ու արժեքների:

Որպես արդյունք մինչ այժմ ներկայացված էթնոսոցիալական ժառանգության և արդի մապոնիայի սոցիալական զարգացումների՝ մեզ ժամանակակից ճապոնացիներն աշխարհում ու Արևմուտքում ունեն «ինքնասպանների ազգի» համարում: Բոլոր դեպքերում, այդպիսին է այն վերնագիրը, որը Օկազակին՝ դեմոգրաֆիայի բնագավառի մի մասնագետ, ընտրել է 1960 թ. Տոկիոյում տպագրված իր գրքի համար: Բայց վիճակագրությունը ցույց է տալիս, որ այդ առումով չկա նշանակալից տարբերություն նրանց ու արևմտյան ժողովուրդների միջև, և տարբերությունները վերաբերում են ինքնասպանությանն առընչվող նորմերին ու «սոցիալական ինտեգրացման ցուցանիշներին»¹⁷: «Ինքնասպանների ազգի» համարումը արդյունք է այն հանգամանքի, որ կամավոր մահվան ինստիտուտը եղել է գերիշխող տարր ճապոնական հասարակության մեջ:

Որոնք են «ինքնասպանների ազգ» կոչման արդի նախադրյալները:

Եթե արտահայտվենք արևմտյան սոցիոլոգիայի լեզվով, ապա մապոնիայի մասին պետք է ասենք հետևյալը. ինքնասպանների տարիքային խմբերի վիճակագրությունը ցույց է տալիս, որ ծեղերն ամենախոցելին են: Այստեղ շատ կարևոր է նկատի ունենալ, որ ճապոնական հասարակության առնչությամբ «ինքնասպանություն» հասկացության կիրառումը պայմանական է, քանի որ այն եվրոպական արմատներ ունի և արտահայտում է արևմտյան սոցիալական կոնցեպցիաները: Ֆրանսիացի Էմիլ Դյուրկհայմի արևմտյան հայեցակարգը, որն ինքնասպանությունը բխեցնում է հասարակության ցածր ինտեգրացիայից և հասարակական ցնցումներից, չի արտահայտում կամավոր մահվան ճապոնական ինստիտուտի բովանդակությունը: Մապոնիայում, հակառակ արևմտյան մոտեցման, ինքնասպանությունը բացատրվում է սոցիալական բարձր ինտեգրացիայով, հասարակության մեջ իշխող «ավտորիտար գրուպիզմով» և պարտքի զգացման որոշիչ դերով¹⁸: Վիճակագրությունը ցույց է տալիս հետևյալը. 1979 թ. յուրաքանչյուր 100 հազ. ազգաբնակչության հաշվով ինքնասպանությունների քանակն ամբողջ հասարակության համար եղել է 18.5, իսկ 65-ից բարձր տարիք ունեցող մարդկանց համար՝ 50 հոգի¹⁹: Ծեղերն իրենց սպանում են տարբեր պատճառներով՝ մեռության, անօգտակարության ճնշող զգացումի, հիվանդության պատճառով: Այս ամենին պետք է ավելացնել այն, ինչը գալիս է էթնոմշակութային ավանդույթից և անվանվում «զոհողության մոտիվ»: Չոհողության մոտիվը առանձնապես տարածված է գյուղական վայրերում, այն ծեղերի շրջանում, որոնք ապրում են իրենց երեխաների հետ, նյութապես անապահով չեն, բայց զգում են, որ իրենք չեն կարող օգտակար լինել և սկսում են իրենց դիտել որպես ծանր բեռ ընտանիքի համար: Այսպիսի ինքնազոհողությունները հատկապես այրիների մեջ տարածված են երկրի ավելի աղքատ շրջաններում, օրինակ՝ Նիիգատայի և Իվատեի ձյունառատ պրեֆեկտուրաներում: Այս պրեֆեկտուրաներում կան գյուղացիական ընտանիքներ, որոնք չքավորության մեջ չեն, բայց դեռ հավատարիմ են անցյալի դաժան օրերի սովորույթներին: 1983 թ. Կանգի փառատոնում հաղթած իմամուրա Սոհեիի ֆիլմը, որը մեր էկրաններին ցուցադրվեց «Լեգենդ Նարայամայի մասին» վերնագրով, պատկերում է ծեղերի կամավոր մահը ծայրահեղ աղքատության պայմաններում: Կինոնկարը նկարահանվել է ճապոնացի գրող Ֆուկազավայի պատմվածքի հիման վրա, որը 1956 թ. թարգմանվել է անգլերեն «Ծեր կինը» վերնագրով և Լոնդոնում հրատարակվել «Երեք ժամանակակից ճապոնական կարճ պատմվածքներ» ժողովածուի մեջ²⁰:

¹⁷ Str'u R. Charles, Chandler and Yung-Mei Tsai. Suicide in Japan and in the West. International Journal of Comparative Sociology, XXXIV, 3-4, 1993, էջ 244-259:

¹⁸ Ավելի մանրամասն տես նույն տեղը, էջ 244-259:

¹⁹ Str'u M. Pinguet, նշվ. աշխ., էջ 34:

²⁰ Str'u "Three Modern Japanese Short Novels", London: Penguin Books, 1961:

Անցյալի դաժան օրերին՝ սովի ժամանակ, սովորություն կար, որ որդիներն իրենց անօգնական մայրերին, իրենց թիկունքին կապած, տանում էին ինչ-որ դամբարան սարերում, որտեղ նրանք աղթում էին ձյունների ու մթութային մեջ նստած, մինչև սառչում էին, և դադարում էր նրանց սրտի աշխատանքը: Նույնիսկ այսօր 65 տարեկան կանայք ավելի հաճախ են սպանում իրենց, քան տղամարդիկ (1978 թ. տվյալներով ինքնասպան են եղել 2578 կին և 2277 տղամարդ²¹): Ծապոնական ավանդույթը միշտ էլ առանձնացրել է ճակատագրին հնազանդվելը, ինքնաանհայտացումը և ինքնազոհողությունը որպես կանացի բնութագրումներ:

Տնտեսական անհրաժեշտությունն այս գյուղական համայնքներին ստիպում էր պահպանել ազգաբնակչության հաշվեկշիռն ավելորդ այրիների կիսակամավոր ինքնազոհողությամբ, արքորտների և ծնունդների ժամանակ երեխաների սպանության միջոցով (առանձնապես աղջիկների): Մ. Փինգուետը գրում է, որ, նկատի ունենալով ճապոնական մշակույթից հայտնի՝ մայրերից որդիների էմոցիոնալ կախվածության մոդելը²², մենք կարող ենք համոզված լինել, որ ճապոնացի գյուղացին, որն իր թույլ մորը ձմռան մի երեկո բարձրացնում է սարն ի վեր, իր վշտով լի սրտում կրում է նույնքան ուժեղ տառապանք, որքան քրիստոնեության որևէ հետևորդ մեռնող հարազատի մահի մոտ²³:

Ծապոնական ավանդույթը միշտ էլ շեշտել է անհատի պատասխանատվությունն իր անմիջական միջավայրի հանդեպ: Այս համերաշխությունը երկսայրի սուր է: Այն կարող է պաշտպանել ինքնամերժումից, այն կարող է նաև տանել կամավոր մահվան: Եթե երիտասարդ ճապոնացին ցանկանում է հաջողակ լինել, դա ինքնահաստատման համար չէ: Այս հասարակության մեջ չկա անհատապաշտություն: Հաջողության ձգտումը նպատակ ունի ծնողներին գոհացնել, նրանց առաջ պարտքը կատարել, որին նրանք սպասում են: Մտածում են, որ անհատն անընդհատ պարտք ունի ծնողների հանդեպ: Այդպես է ասում նաև կոնֆուցիականությունը, որն ավանդվում է կրթական համակարգի միջոցով: Եվ այն, ինչը ճապոնացիներին մեծապես զարմացնում է արևմտյան աշխարհընկալման մեջ, անհատի կողմից պատասխանատվությունը հրապարակայնորեն ժխտելու և ինքն իրեն հեշտությամբ ներելու պատրաստակամությունն է: Ծապոնացիները փաստարկներ չեն բերում իրենց ձախողումն արդարացնելու համար: Նրանք ոչինչ այնքան բարձր չեն գնահատում, որքան մեղքն ու պատասխանատվությունն ընդունելը: Սա պայմանավորված է ճապոնացի անհատի կողմից՝ ճապոնական մշակույթից ու հասարակությունից հայտնի և արդեն հիշատակված «զոհողության մոտիվի» և իր սոցիալական դերի նույնականացմամբ²⁴:

Ծապոնացիների՝ «ինքնասպանների ազգի» համարումը առնչություն ունի ինքնապատժման նրանց հակվածության հետ, որն Արևմուտքում դիտվում է որպես հիվանդագին մի երևույթ: Ինքնապատժման այս հակվածությունը Ծապոնիայում միայն հիացմունք է առաջ բերում և նշանակում սոցիալական դերի ու պարտքի լիարժեք կատարում: Այս առումով բնութագրական է լավ հայտնի միջնադարյան ճապոնական մաքսիմը. «Հիշի՛ր, պարտքն ավելի ծանր է, քան սարը, իսկ մահն ավելի թեթև, քան փետուրը»: Այս ավանդական վարքականոնը առաջ է բերում մի իրավիճակ, որը հանգեցնում է կամավոր մահվան:

Ի հավելումն արդեն հիշատակված «զոհողության մոտիվի»՝ հանուն համայնքի անհատի ինքնամերժման, պարտքի զգացման հետ նույնականացման, ծայրահեղ աղքատության պայմաններում ծերերի ինքնազոհողության և տիրոջ մահից հետո վասալի կամավոր մահվան երևույթների, համաձայն արևմտյան հեղինակների²⁵, ճապոնական

²¹ Տե՛ս M. Pinguet, նշվ. աշխ., էջ 34:

²² Տե՛ս "Essays in Self-Destruction", New-York, 1967:

²³ Տե՛ս M. Pinguet, նշվ. աշխ., էջ 35:

²⁴ Ծապոնական մշակույթի հայտնի ուսումնասիրող Ջորջ դը Վուրը շեշտում է իր սոցիալական դերի հետ ճապոնացի անհատի նույնականացման (իդենտիֆիկացիայի) կարևորության մասին (տե՛ս George De Vos, Socialization for Achievement: Essays on the Cultural Psychology of the Japanese. Berkeley and Los Angeles, 1973):

²⁵ Տե՛ս "Death and Ethnicity: A Psychocultural Study", NY: Baywood Publishing Company, Inc., 1981. Takie Sugiyama Lebra, Japanese Patterns of Behavior, Honolulu, 1976:

Ակարագիրը լավագույն ձևով երևում է նաև կյանքի ավարտի հանդեպ նրանց վերաբերմունքից: Այն համակերպված ու խոնարհ ընդունումը, որով նրանք վերաբերվում են կյանքի ավարտին, իսկապես, շատ տպավորիչ է: Ֆենոմենոլոգիական իրողությամբ՝ ներառյալ մահվանը և տառապանքին համակերպվելու, և այն ընդունելու դիրքորոշման հիմքերը, նաև բուրդայական ուսմունքի մեջ են²⁶: Այս առումով տիպական է վաղ բուրդայական «Ամեն ինչ անցողիկ է» կամ Բուրդա Օակլամունդի «Կյանքը տառապանք է, տառապանքից ազատվելու ուղին երկրային կրքերից ու կապվածություններից ազատագրումն է» իմաստությունը: Այս համակերպումը խիստ հակադրվում է արևմտյան դիրքորոշմանը, որը ձգտում է հասկանալ և վերահսկել արտաքին աշխարհը: Ասենք նաև, որ համակերպումը չի սահմանափակվում միայն մահվան հետ առնչվող հարցերով, այլ և վերաբերում է կյանքին ընդհանրապես: Ծապոնական վաղ աշխարհընկալումը և բուրդայական ուսմունքը շեշտում են շրջապատող իրականությանը համապատասխան գործելը, «բնությանը» համապատասխան վարվելը:

Այս մշակույթը կրողների մեջ ապրում է անկախ նախակարգական ոգին, որը նրանց մղում է տեղափոխվել անծանոթ մի աշխարհ: Եվ նրանց մեջ ամենատիպականը մի ծեր կնոջ արտահայտած դիրքորոշումն է. «Ես չեմ ձգտում մոտեցնել իմ մահը, բայց եթե այն գա, ես շատ էլ չեմ մտահոգվի... կյանքը նման է քամու հոսանքի... գետերը կշարունակեն հոսել իմ գնալուց հետո...»²⁷: Մեկնաբանվող մշակութային բնութագրումի ամփոփման համար ներկայացնենք ամերիկացի Հ. Լաֆկադիոյի կողմից անգլերեն թարգմանված ճապոնական մի երկտող մեր թարգմանությամբ.

Գիշերը գերեզմանատանը

Այս լուսնի լույսը, որ ցոլում է ջրի վրա, որը ես լցնում եմ մեռածների համար, Ամեննին ոչնչով չի տարբերվում այլ տարիների լուսնի լույսից²⁸:

Մենք փորձեցինք ճապոնացիների էթնոսոցիալական համակարգն ու ինքնությունն ուրվագծել կամավոր մահվան և կոնֆլիկտի օգնությամբ: Մեր հիմնական մոտեցումն այն էր, որ ճապոնացիների մեծագույն սոցիալական զգայունությունը, պատասխանատվությունը և կամավոր մահը նրանց ազգային ինքնության ու դիմագծի հիմքում են: Եվ ճապոնական ազգային ինքնությունը հասկանալու յուրաքանչյուր փորձ կարելի է սկսել կամավոր մահվան ինստիտուտի ուսումնասիրությամբ:

Կամավոր մահը բնութագրող ինքնամերժումն ու ինքնազրկումը նորմատիվ բնույթ ունեն: Նորմատիվ վարքը, ինչպես Մաքս Վեբերն է ասում, առաջնորդվում է պատասխանատվության էթիկայով, նրա համար կարևորը ճիշտ վարվելակերպի նորմն է և ոչ թե դրա հետևանքը կամ արդյունքը: Կամավոր մահը պատասխանատվության էթիկայով կերտված ինստիտուտ է, և նրա լավագույն բնութագրումը վերևում հիշատակված «Հիշի՛ր, պարտքն ավելի ծանր է, քան սարը, իսկ մահն ավելի թեթև, քան փետուրը» ճապոնական մաքսիմն է:

Դարեր շարունակ բրնձի մշակումը, որով գոյատևել է ճապոնական գյուղական համայնքը, արմատավորել է պարտքի զգացում: Գյուղական համայնքի համար ոչինչ այնքան կենսական չի եղել, որքան նույն հողակտորը բաժանող տարբեր ընտանիքների փոխադարձ պատասխանատվությունը: Անհատական մղումները սահմանափակվել են: Այսպես ծնունդ են առել «հանուն խմբի ու մյուսների ինքն իրեն ամտեսող ճապոնացի կնոջ իդեալը» և «պարտքի ու պատասխանատվության մարմնավորում սամուրայը»:

Ծապոնական դիմագծի համար անփոխարինելի է սամուրայի կերպարը: Պատվո սամուրայական վարքականոնը Ծապոնիայի կերպարի խտացված արտահայտությունն է:

²⁶ Ծապոնական էթնոհամակարգին բնորոշ ֆենոմենալիզմը և իդեալիզմի ու բացարձակի հանդեպ անտարբերությունը քննվում է Նակամուրա Հաձիմեի “Ways of Thinking of Eastern Peoples” (Hawaii, 1964) աշխատության մեջ:

²⁷ “Death and Ethnicity: A Psychocultural Study”, p. 167.

²⁸ Hern Lafcadio. In Ghostly Japan. Boston: Little, Brown, and Company, 1899, p. 159.

Միջնադարյան «Հագակորեն»²⁹ հաստատում է, որ սամուրայը պետք է ծառայի այնպես, կարծես թե արդեն մեռած է: Իսկ 20-րդ դարի սկզբին Ինազո Նիտոբեն «Բուսիդո. Ճապոնիայի ոգին» անգլերեն դասական աշխատության մեջ, որը մեկնաբանում է ինքնազոհողության ավանդույթի դիմացկունությունը և նրա դերը Ճապոնիայի արդիականացման մեջ, ինքնազոհումի ու կամավոր մահվան գաղափարախոսության մասին եզրափակում է. «Մենք չունենք քրիստոնեության հետ համեմատելի կրոն, բայց մեր անցյալի ուղմիկների բարոյականությունը բավական է: Մարդիկ կարող են ապրել առանց հավատալու մեկ այլ աշխարհի, բայց ոչ առանց հավատի ինչ-որ բանի հանդեպ... Եվ քանի որ հավատը զոհողության մեջ է, չպետք է արդյոք մենք մեր երեխաներին ուսուցանենք մեռնել լավագույն ձևով»³⁰:

Б. Ж. ГИШЯН - Добровольная смерть: о национальной самобытности японцев. - В статье рассматривается формирование самобытности японцев в контексте конфликта и добровольной смерти. Подчеркивается, что повышенное чувство ответственности и добровольное самопожертвование лежат в основе формирования самобытности японцев. Следовательно, любая попытка понять их национальную самобытность предполагает глубокое понимание традиции добровольной смерти.

Рассматриваются фрагменты японских источников, литературных произведений. Многовековая традиция добровольного ухода из жизни является выражением свойственного японцам отношения к смерти, чуждое западной культуре и христианству. Эта традиция, по мнению автора, связана с отличающимися от европейских установками японской культуры и общественного сознания.

²⁹ «Հագակորեն» (բառացի՝ «Տերևներում թաքնվածը») մոտ 1300 պատմությունների ժողովածու է, որոնք գրառվել են 1710-1716 թթ. ընթացքում: «Հագակորեն» ուղմիկի վարքականոցի ծայրահեղական մեկնաբանում է և հաստատում է մահվան անվերապահ ընդունումը:

³⁰ Մեջբերումն ըստ M. Pinguet, 624. աշխ., էջ 189: